

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Բաղաճական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻ 21

Գ. ՇՐՋԱՆ

25 ՄԱՅԻՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթերի շաբաթական թիվը հասնում է 51-ին։ Պոչոյի համար Գառուցի
և զարմանում են համար Գիտական դր., կանխիկ վճարելի։ Արտատպում 12 ֆրանկ կամ
5 ռուբլի։ Թղթատարական ծախսը խմբագրության վրայ է։ Վեցամսեայ թիվը հասնում է 6 ֆրանկի։
Թիվը կոնկրետաբար։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։
Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։
Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։ Թիվը հասնում է 6 ֆրանկի։

Քի հրատարակումը հեղափոխական է և չեն դարձում քի։

Չեմք կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցե

درعليه آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزتهسى اداره سنده

ԹԻՎԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Rédaction de la Revue MASSIS

Տպարան Զ. Մատթեոսյան

Imprimerie H. Matteosian

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

CONSTANTINOPLE

10
 9
 8
 7
 6
 5
 4
 3
 2
 1
 0
 1
 2
 3
 4
 5
 6
 7
 8
 9
 10

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 25 ՄԱՅԻՍ 1902 —

ԹԻԻ 21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նապարէգի բնութիւն (նմրագրական) Տ. Ա. : — Մտաւիտիւմ (Սիրերգ) Վ.Ա.Մ.Ն. ՄԱՆԻՉ.
ԵԱՆ : — Եւանգի պատկերներ. Տանը բարեկամը. ՄԵՆԱՍԻՐ : — Նորահմար պատկերներ. ՍԳԻԼ.
ԼԱ : — Անտուր (ժողովրդային սիրերգեր) Հաւաքեց Վ. ԳՈՒՅՈՒՄՅԱՆ : — Ընթանկան
ստամներ. Վճարօրը. ԲՕԼ. ՊՈՒՐԺԷ : — Յուշեր :

ԱՍՊԱՐԷԶԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Պրտոյ թաղային վարժարանի մը այս տար-
ուան շրջանաւարտներէն մէկը նամակ մը
ուղղած է Մալիսի խմբագրութեան՝ իր նա-
խասիրական ասպարէզին , — զրականութեան ,
— մէջ առաջնորդուելու համար խորհուրդ մը ,
կարծիք մը հարցնելով : — Որովհետեւ այդ
պատանին միակը չէ իր անասկին մէջ , էր
հրատարակենք իր գիրը որ կրնայ կարգ մը
խորհրդածութիւններ թելադրել :

Ըլլալով համեստ ուսանող մը ազգային վարժարանի
մը , այս տարի շրջանաւարտի քննութիւնն անցունելով
յաջողեցայ Պատ. Ուսումն. խորհուրդէն ստանալ շրջանա-
ւարտի վկայական : Բնական մղումով մը չեմ սիրած որ
եւ է արհեստ. զրական ասպարէզը մտնելու տենչն զիս օրէ
օր կը լսփէ , եւ ես չեմ կարող՝ արդի ունեցած միջոցնե-
րով՝ հասնիլ փափագներուս : Կոչում մը կը զգամ մէջս՝
զրական կեանքին . ուստի , յաջուրդ մը տալու համար իմ
այս փափաղիս , խմբագրութեանդ կը դիմեմ որպէս զի բա-
րեմանի առաջնորդել զիս այդ պատուական եւ սիրուն
ասպարէզին :

Նամակապէր պատանին անունը տալու եւ
թաղը նշանակելու պէտք չի կայ , ոչ ալ գինքը
նշանակելու՝ իր մէջը բնական կոչում մը զգա-
լուն համար դէպի զրական ասպարէզը : Ու-
շադրութեան արժանի խնդիր մըն է զոր այդ
պատանի մէջտեղ դնելու անկեղծութիւնը կու-
նենայ , անդիտակցաբար արձագանգ դառնա-
լով իրեն շատ մը տարեկիցներու , որոնք մի-
եւնոյն մարմաջը ունին : Եւ եթէ ատանք ա-

մէնքն ալ , իրենց ծնողքին բարեկեցութենէ
զուրկ ըլլալուն , զիւրութիւնը չեն վայելեր՝
արհեստէ կամ առեւտուրէ խորշկնուն հա-
մար՝ անոնց չմտենալու , ապահովագէտ ,
զփոք ու զփկամակ կը յաճախեն խանութ մը
կամ վաճառատուն մը , միշտ ինքզինքնին
զերազատ գտնելով այդ նիւթական աշխա-
տութիւններէն՝ մտաւորականին յարելու տեն-
չով :

Այս երիտասարդները պէտք է նախ մտա-
ծեն թէ զրականութիւնը ասպարէզ մը նկատ-
ուած է երբեք մեր մէջ կամ թէ կրնա՞յ
նկատուիլ այսուհետեւ , — առանց չփոխելու
լրագրապետութիւնը ու խմբագրութիւնը զրա-
կանութեան հետ , — եւ ազգին մէջ կա՞յ
այսօր անհատ մը , հինկերէն կամ նորերէն , որ
առանց ուսուցիչ , խմբագիր , փաստաբան ,
բժիշկ , արուեստագէտ , արհեստաւոր կամ
առեւտուրի մարդ ըլլալու եւ առանց այդ
գործերէն մէկուն միջոցաւ իր ապրուստը ա-
պահովելու , միմիայն «գրագէտ»ի հանդաման-
քով իր հացը ձարէ :

Պատասխանը ժխտական է բացօթյապէս :
Ուրեմն ի՞նչ հարկ կարօտը քաշել անիրա-
կանալիին՝ ինքնախաբէութեամբ մը որ ուրիշ
հետեւանք չունենար բայց եթէ երեւակայու-
թեամբ օրօրուող էակ մը դարձնել կեանքի
պայքարին մէջ նկատուող պատանին , զրա-

կանութենէ բախտովին հետեւ, անդիտակից իր վիճակին, անստոյգ ապագայով ու ոչ նուազ անստոյգ ներկայով :

Գրականութիւնը իբրեւ տապարէզ նկատել բաղձացողները միջակ կարողութեան տէր կամ աղքատ ընտանիքներու զաւակներ են ընդհանրապէս, որոնք ո՛չ իսկ գիւրութիւն ունին բարձրագոյն ուսմունքներ սորվելու, եւ, ցաւալի է հաստատել այս պարագան, թաղային դպրոցի մը չըջանալ աւարտելուն պէս, օտանաւոր գրելով ու նորալէզ թարգմանելով՝ կը կարծեն իրենց նախաքայլերը առած ըլլալ գրականութեան մէջ, Ենթադրելով որ յաջող գրութեամբ մը արտագրեն, ինքնաշխատութեան, ուսումնասէր՝ ոգիի եւ ընածին յատկութեան մը շնորհիւ, միթէ քանի մը ներգաշնակ յանգեր ու քիչ շատ սիրուն պատմութեամբ մը պիտի բաւե՞ն զիրենք գրագէտ դարձնելու եւ իբրեւ գրագէտ ապրեցնելու : Իսկ եթէ այդ բառին չարաշար գործածումովը, գրագէտ ըսելով խմբագիր ըսել կուզեն, — ինչպէս ենք այսօրուան մամուլի աշխատանքներու մեծագոյն մասով, — այդ պարագային ալ պէտք է իրենց բացառել թէ արտաքին հրապոյրին չի համապատասխաներ գրականութեան այդ մասնաճիւղը՝ դործնականին մէջ :

Փառիկանկատութեան հակառակ պիտի ըլլա՞ր՝ մանրամասնութեանց մէջ մանել այս վերջին կէտին վրայ :

Մեր նիւթը տարբեր է բոլորովին : Քիչ մը համակրանքի ու քիչ մըն ալ կարեկցութեան արժանի այն պատանիներուն է խօսքերնիւ, որոնք չըջանաւարտի վայրուն վրայական մը ձեռքերնին՝ կը շլանան ու կը մօլորին պարզապէս, — վասնզի մօլորանք չէ՞ միթէ ծուռ ու անել ճամբէ մը մանել ուզելը կեանքի ասպարէզին մէջ. արհամարհել ինչ որ ապրուստը պիտի ապահովէ նախ, եւ թերեւս անուն մը եւ գիրք մը չինել տայ հաճէն, եւ եթերայինն բաղձալ՝ Ո՛չ, դեռաւի բարեկամներ, ո՛վ որ ալ ըլլաք եւ ո՛ւր որ ալ գտնուիք, ծանօթ կամ անծանօթ, թօթափեցէք այդ մզձաւանջը ձեր վրայէն. գրագէտ կամ բանաստեղծ ըլլալու առիթը միշտ կը ներկայանայ ձեզի, եթէ իրաւ ու-

նիք այդ կոչումը, կը բաւէ որ նախ կատարեալագործէք ձեր մտաւորական զարգացումը ու մշակութիւնը, միեւնոյն ժամանակ կեանքը ճանչնալով, մարդերը ու իրերը ուսումնասիրելով : Վիպասանութիւնները եթէ կը տաքցնեն երբեմն ձեր երեւակայութիւնները, երբեմն ալ շա՛տ աղուոր ու ճշմարիտ բանք կըսեն անոնք ձեզի : Օրինակ, Բօլ Պուստի «Վճարօրը» — L'échéance — որուն մէջ՝ հոգեբան վիպասանը խօսելով իր երկտառադրութեան առաջին տարիներուն վրայ՝ կը գրէ ինչպէս կարգացիք անշուշտ առողջ պարտներով լեցուն այդ վէպին սկիզբները, Մասիսի նախօրդ թիւին մէջ :

Իմ սխալս, — որ եղաւ սխալը այնքան երեսասարդեւոր զորս գրեղու կանխառն փառասիրութիւն մը մոլորեցուց, — սա երբ որ գրականութիւնը նպատակ մը ընէր կուզելի, միևնոյն անիկա արդիւնք մը պէտք էր ըլլար լոկ : Վէպեր չինէր կուզելի ու բան մը չէր գնեւած. ոսանաւորներ գրել կուզէի, ու բան մը չէի գտնած :

Պարտէի այս խոստովանութիւնը բաւական ուժ կուտայ անշուշտ, իբրեւ օտար ծանօթ հեղինակի մը խօսքը, նոյն միջոցով մեր մէջ գրութեաներուն որոնք հաճութեան կարգացուելու անդ՝ դառնութիւն եւ զայրութիւն կը պատճառեն յաճախ դեռաւի ընթերցողներուն : Բայց այս ներհակ ապաւորութիւնը արդեւ մը չէ որ չի չեչաւի իրականութիւնը եւ նորահաս սերունդը հիւանդօտ դրամագրութեան մը ու կանխահաս գրագիտութեան մը արտավարակումէն զգուշացնելու միջոցները ցոյց չի արտաբեր :

Բոլորովին նիւթապաշտ ու միմիայն դրամ չափելու, դրամ դիզելու տենչով ապրող տեղաւոր մը պատրաստելու գաղափարն ալ որ գրականութենէն հաց սպասելուն պէս՝ ծայրայեղութիւն մըն է, պիտի խրաչեցնէր որոնք պատանիները. եւ իրաւումը, Միջին ծառայ մը ընտրելը դժուար չէ, մինչեւ այն որ ուր գրական երկերու գնահատումը եւ քննադատութիւնը ընթերցասիրութիւնը այն աստիճանին հասնի մեր մէջ, որ մարդ մը կարող ըլլայ՝ գիրք գրելով ապրիլ, Հիմակահիմայ՝ այս տեսակ ակնկալութիւն մը utopie մըն է :

Հնարեցէք, զհռատի պարաններ, եթէ ձեր ծնողքին նիւթական վիճակը կը ներէ, բժշկական, իրաւաբանական, ճարտարապետական ասպարէզներէն մէկը. եւ կրնաք միեւնոյն ատեն զրազէտ ըլլալու պատրաստուիլ: Կամ անոնցմէ տատիճան մը վար, առամնարոյժ եղիք, զեղադործ եղիք, ձեռարուեստ մը ընտրեցէք, արհեստ մը սորվեցէք. վաճառականութիւն, երկրագործութիւն, խանութպանութիւն, ասոնք ալ իրենց զանազան ճիւղերով՝ լայն ասպարէզներ կը բռնան ձեր առջև. ու պէտք չի կայ կրկնելու միշտ միեւնոյն բանը, թէ կրնաք միտնդամայն մշակել զրական այս կամ այն սեւը, մտաւոր հաճոյքի մը համար: Ու մի՛ մոռնաք որ, այդ ասպարէզներէն, արուեստներէն կամ արհեստներէն ո՛չ մէկը աւելի զժուար է քան զրազէտի ասպարէզը, եթէ լրջօրէն ըմբռնէք զայն՝ իր բազմակողմանի պէտքերովը, զօրս գոնացնելու համար նախ պէտք է ապահոված ըլլաք նիւթական վիճակնիդ որ եւ է գործով մը ու ընկերական զիրքերնիդ որ անկէ կախում ունի. Անկէ ետքն է միայն որ կրնաք

լրջօրէն մտածել զրազէտ ըլլալու ձեր բաղձանքին վրայ, եթէ մինչեւ այն ատեն այդ բաղձանքը յամառի մնայ ձեր մէջ:

Տ. Ս.

ՄՏՄՍԱՆՔ

ԻԶՄԻՐԻ ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՐԱՍՄԻՐԱՅ ընկերութեան տեղեկագիրը, որ կը ներկայացնէ այդ մարդասիրական մարմնին հաշուական և այլ գործառնութիւնները ու որբանոցին վիճակը, 1899 մարտ 16է 1901 նոյեմբեր 30: Գոնութեամբ կը տեսնուի որ ընկերութիւնը, այդ 32½ ամսուան միջոցին, 215,303¼ դրշ. նպաստ գտնէր է: հասոյթի զանազան աղբիւրներէ, և 36 որր կը պատասպարէ:

ԲԱՌԱՆԵՐՈՅՇ, զոր հաւաքած է Արրահամ Էֆ. Այվագեան, Այս փոքրիկ տետրակը՝ որ ապագային յօրինուելիք հանրագիտակ բառարանի մը նմոյշը կրնայ նկատուիլ՝ կը պարունակէ գաւառային շատ մը բառեր, իրենց նշանակութեամբը, և արժանի է ամեն բանասերներու ուշադրութեանը:

ՆՈՐ ԴՊՐՈՑ, Ժ. և վերջին պրակ՝ տարրական ընթացքի Սմբատ Էֆ. Դաւթեանի հրատարակած սոյն օգտնաշատ դասագիրքը, որ արդէն իսկ բաւական ընդունելութիւն գտաւ ազգ. վարժարաններու մէջ, տարակոյս չիկայ որ աւելի ծաւալում պիտի գտնէ, հիմայ որ ամբողջացաւ: 10 տետրակներու գինն է՝ Պոլսոյ համար 30 և գաւառներու համար 35 դրշ.

Մ Տ Մ Ս Փ Ո Փ Ո Ւ Մ

Աչներս գոց՝ կ'երազեմ, ու կը սիրեմ քեզ:
Զերդ մոլեռանդն որ, վերացած, նըւերական
Պատկերին մօտ, աչներս գոց — կոյսի մը պէս,
Յընորքն ունի այդ հաւասքին ու սրբութեան:

Ու չեմ կրնար նայիլ քեզի, որ շատ բարձրն ես,
Աչներն ինչպէս վառ արեւէն կը շըլանան:
Որպէս քե, ո՞ն, մեղաւոր մը ըլլայի ես,
Եւ եւ ճալուածքդ ինձի ուղիք շանքը ցատման:

Այնքան սուրբ ես դուն մըսիս մէջ, այնքան աղուոր՝
Սրբիս համար, որ իմ ակնարկս է անկասկած
Բիւրս արաս մը՝ եւ շընորհիկ վըրան ինկած:

Ու, մըսամիտի եւ քե արբիւ, կը խորհիմ որ
— Քանզի ամեն բանի մէջ քեզ լոկ կը տեսնեմ —
Դուն ես, դուն լոյսն իմ աչերուս, լոյսը վըսեմ:

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՏԱՆԸ ԲԱՐԵԿԱՄԸ

Կ'ուզէի որ նորապէս մը ըլլար պատմութիւն, — իրականութիւն մը ըլլալու տեղ — այնքան ախուր ու անհրապոյր պատկեր մըն է կեանքի, սովորական հասարակ դէպք մը, որուն նմանները կը տեսնենք կամ կը լսենք յաճախ մեր շուրջը, ու գլուխըս անդին կը դարձնենք. մինչդեռ նորապիպագիր մը պիտի պահէր, հետաքրքրական դարձնէր դայն, թերեւս պզտիկ գայթակղութիւն մը պատճառով դրուագներ ալ տեսցնելով անոր վրայ : Ես՝ ոչ իսկ խորհրդածութիւն մը պիտի ընեմ, դէմ չեղանու համար ընկերային կարեւորութիւնը այս տեսակ առումներուն որոնք տեղի կ'ունենան ընտանեկան մութ խաւերու մէջ, անձայն անշուշտ, քանի մը դրացիներէ միայն իմացուելով :

Եւ իրաւ ալ, «մութ խաւ» մը ըսուելու արժանի էր, բարին նիւթական առումովը, Աղաւնիին բնակարանը զոր անգամ մը այցելելու առիթ ունեցայ, բարեսիրտ տիկնոջ մը դրամական մէկ նպաստը տանելու համար այդ աղքատ ընտանիքին : Այս կազանդին նախորդ օրն էր : Սովորաբար, չքաւորներուն խոցերը առնիքին մօտ կ'ըլլան. առիկայ՝ վարն էր ընդհանրապէս, խորունկը, ուր իջնողը ջրհորի մը մէջ մոռնելու պակուցիչ տպաւորութիւնը կ'ունենար գրեթէ, տանը վերնայարկը ու դուռը փողոցին հաւասար ըլլալով, ու յաջորդ երեք յարկերն ալ՝ զառիվարի մը կողմէն՝ վրայ շինուած, որոնք մէկ կողմէ միայն լոյս կ'առնէին : Մայր մը, հասակ աղջիկը ու պզտիկ մանչ դուռակը — որոնք ամբողջ ընտանիքը կը կազմէին — այդ նիւզինընէն մէկուն մէջ տեղաւորուած էին տարիներէ ի վեր, ապրուստի միակ միջոց ունենալով լուացարարութիւն զոր մայրը կ'ընէր՝ տունէ տուն չրջելով. ազան գպրոց կերթար ու աղջիկն ալ շարաթական քանի մը զրուշ կը

չահէր ձեռագործ բանելով : Ու զարմանալի հոն էր որ, նիւթականի կողմէ չէր իրենց գանդաւը ու դժգոհութիւնը կեանքէ :

Օր մը մարդ մը սպորեր էր այդ գեանք յարկին մէջ, օձի պէս սողոսկող ու անշուշտ մարդ մը, քիչ շատ տեսքատ ու մաշտաւոր խոտուն : Արհեստաւոր մըն էր ինչ ալ, ատաղձագործ կամ դարբին, ինչ շոր ճշդել. վերջապէս լուացարարութիւն տալու ճանքն մէկը, քիչ շահող ու քիչով գոհացող ու «տանը բարեկամը» եղեր էր, — վաճառայն կեղծաւոր արպարը հարուստ դասակարգին մէջ չէ միայն որ կը գտնուէր : Իրիկուն մը մէկտեղ ճաշեր էին, ուրիշ իրիկուն մը պտոյտի եղեր էին մօտի բլրակին վրայ, կը պատահէր որ լուացարարուհին ու զանաք երբեմն, արին քրտինք մտած, մառնալ ջրաթաթախ, ծոռադերը կ'իմտած՝ տարբերութիւն վրայ, տաշտին առջեւ կենալէն, որ օրականն ալ չառած, ծխախոտի մը տալով անգամ չ'ունենալով գրպանը. «բարեկամը» կը հողար գտնոնք վայրկենապէս, անշուշտ մեշտ գնումները ընելով դրացի նպատակաւ ճառէն : — Ինչ աղելու մարդ — կը փոփոխէ իր իրարու մայր ու աղջիկ, ապագայ փեսայի տղայի եւ ապագայ նշանածի իրենց խոցով անոր վրայ մարմնացնելով, ու գողունի արիւնքներ փոխանակելով :

Աղջիկը, Աղաւնի, գեղեցիկ չէր, բայց տգեղ ալ չէր ըսուեր. նուրբ հասակ, անաչքեր, առատ վարսեր. բայց այնչափ անխնամ, այնչափ գէշ հագուած, ու հրապուրելի չարժանեւորէր զուրկ, որ մէկը նայուածքը չպիտի դարձնէր իր կողմը : Մարդը, անպիտան աղջիկ վայրկեանէն հաւանք էր անոր. ու տալու տակաւ կը մտերմանար, կը քնէր, կը սիրարանէր. ճամբարի տէր մըն էր իրենց վաճառի դրամաւորի գաղտնիքը :

չէր կրնար ունենալ այդ աղքատիկ միջավայրին մէջ — թէ Ժամանցի սէր մը . տախտակ մը թէ տարփանք մը . ո՞վ կրնայ զիտնալ : Ամուսնութեան խոստում տուաւ , առանց նշանակութեան խոստում տուաւ : Եւ ամբողջով զարծաւ այնուհետեւ :

Տարի մը հազիւ անցած էր այս սերտ յարաբերութեան վրայ , երբ Աղանի զգաց մօտալուտ մայրութեան մը նշանները . ուղեց քահանայ մը կանչել ու պահուելի իր ապագայ դակին հօրը հետ . մարդը յետաձգեց այս խորհուրդին գործադրութիւնը , միշտ անոյշ ու համոզկեր խօսքերով . չէ՞ մի ոք ուշ կամ կանուխ ինք իր կեանքը պիտի կապէր անոր կեանքին . պէտք էր որ գործերը քիչ մը կարգադրէր , առնելիքները գտնէր , տուն տեղ կազմէին : Առաջին սայթաքում մը՝ երկբարդ մը կը բերէ միշտ իր հետը , մանաւանդ անկեալ կիներուն , խաբուող կիներուն համար : Աղանի հաւատաց ու չի համարձակեցաւ պնդել : Մայրը կը շարունակէր լուացքի երթալ , ու ինքը կը փակուէր իր խուցին մէջ , մեղաւորի մը պէս , իր ստուերէն իսկ ամչնալով , մինչեւ որ զաւակի մը ծնունդ տուաւ :

Ասիկայ նախաբանն էր իրենց տխուր պատմութեան զոր խոստովանանքի մը պէս պատմեց ինծի լուացարարուհին , այդ չարաշուք օրէն գրեթէ տարի մը վերջը , այս կաղանդին նախորդ օրը , երբ դացի իրեն տանիլ դրամական մէկ նպաստը բարեխիտ Տիկնոջ մը որ շատ յուզուելու էր՝ իմանալով որ իրենց նախկին լուացարարուհին աչքերուն լոյսը կորսնցուցեր է :

Աղանիին մայրը կոյր էր հիմայ , ցուէն , ամօթէն , Աղջիկը երեսի վրայ ձգուելու էր՝ նորածինին հետ զոր չէին կրնար պարտիւղ դուռ-դրացիէ . խայտառակուած կը զգային ինքզինքնին թաղին մէջ , ու իրենց ազգականներուն աչքին . մարդը առեր քալեր էր , իր յաւիտեական խոստումները կրկնելով թէ գործերը պիտի կարգադրէ ու պիտի վերադառնայ ամուսնանալու : Խորհուրդ տուող եղբր էր իրենց որ Պատրիարքարան զիմեն . չէին համարձակած . կը վախճային մարդը

սրտոցնեղէ . հապա եթէ ելլէր իրենցմէ գաղտնի ուրիշ աղջկան մը հետ ամուսնանալու , յետոյ , իրենց չորս պատին մէջ մնացած scandaleը հրապարակ հանելու պէս բան մը պիտի ըլլար ընելիքնին : Անգամ մը քահանայի մը հարցուցեր էին , — վասնզի տաներէց չունէին՝ աղքատութեան պատճառով , — «համբերեցէք» ըսած էր :

Ու կը համբերէին , աննկարագրելի առաւպանքներով , հոգեկան ու նիւթական :

Մարդկային դժբաղդութիւններուն է՞ն ահռելի վայրկեանին՝ նախախնամութիւնը իր ձեռքը կը կարկառէ , կըսեն , կարեկցութեան արժանի յուսահատին , բարեգէպ դիպուած մը ստեղծելով կամ վեհանձն մէկը առաջ անցունելով : Այս լքուած , ընկճուած ընտանիքին — որ իր մահը միայն կը փնտռէր — նախախնամական կարեկցութիւնը ներկայացաւ . . . կաթնավաճառի մը կերպարանքով , հայ բարի մարդուկ մը , անգուակ ամուսին մը , որ ուղեց օրդեգրել Աղանիին զաւակը , — սիրուն , քաջառողջ պէպէք մը : Մանկամարդ աղջիկը — մեղաւոր ու ամօթահար թէեւ — ընդդիմացեր է նախ . մայրական զգացումը աւելի զօրաւոր էր իր մէջը՝ ամէն անարդարանքի , ամէն զրկանքի յաղթելու աստիճան : Յետոյ , տեղի տուել էր դառն իրականութեան առջեւ . ո՛չ իսկ օրօրոց մը գնելու կարողութիւն ունէր , ու այդ ցուրտ ձմեռ օրերուն՝ դժուարաւ ածուխ կը ճարէին : Հացեր , աղթեր էր ամբողջ գիշեր մը , վերջին գիշերը որուն յաջորդ առաւունք իր հաւանութիւնը կամ մերժումը պիտի յայտնէր կաթնավաճառին : Իր գէմ ունէր երկու մարդ , որոնցմէ մէկը՝ զաւակին հայրը , անտարբեր կը մնար ու խոյս կուտար , եւ ուրիշ մը՝ օտարական մը՝ որ կը պաղատէր , կը խնդրէր իրեն յանձնուիլը այդ մանկիկին որուն ամէն խնամք ու գուրդուրանք պիտի նուիրէր իր կնոջը հետ , բան մը պակաս չպիտի թողուր :

Առաւուն , մութնուլուսուն , երբ թաղը կը քնանար դեռ , ու կաթնավաճառի մը երեւումը տարօրինակ չէր տան մը դուռը , Աղանի՛ իր վախ ուսերը ծածկող մաշած շալին մէջ փաթկելով զաւակը , յանձնեց անոր , կաթնոյին համբոյրով մը որ վերջինը պիտի

ըլար, մինչ մայրը՝ ներսը կծկտուած՝ ար-
ցունք կը թափէր :

Լուսացարարուն հին ալ անկէ ետքը կորսն-
ցոց իր բազուկներուն ոյժը . զլիսու յաճա-
խակի պտոյտներ կունենար, որոնք արգելք
կըլլային իր աշխատելուն . թշուառութիւնը
աւելի ահաւոր կերպով սկսաւ բոյն գնել այդ
մթաստուեր յարկին տակ . Աստուած ողորմեր
էր նորածին մանուկին միայն . միւսները կը
տառապէին . ապրուստի խնդիրը երկրորդա-
կան դարձուց իրենց համար ուրիշ ամէն մտա-
ծում . երբեմն գիշերներ կ'անցունէին միմի-
այն հաց ուտելով, առանց տաք կերակուր
մը գտնելու . Աղաւնիին եղբայրը չի համար-
ձակեցաւ դպրոց երթալու . կ'ամէնար ընկեր-
ներէն, ու իրեն այնպէս կուգար որ, ծաղ-
կոցին դուռնէն ներս մտնելուն, քմծիծաղներ
կ'արձակուէին շուրջը :

Տարած դրամն մեծ բան մը չէր, բայց
քանի մը օրուան համար պիտի սխտիէր դա-
նոնք . Խտրապիւրով վար իջայ քանի չափ
սանդուխներէ, որոնց ստորոտը՝ գէպի աջա-
կողմ՝ կիսաբաց դուռնէ մը կը բուրէր եփ-
ուող լուրիայի հոտ մը . Լուսացարարուն
խուցն էր, մէջտեղը՝ մանկալին վրայ՝ հողէ
պտուկ մը դրուած . պատմայէ վարագոյրներ,
զանազան կտորներէ կազմուած՝ կը ծածկէին
երեք պատուհանները . ցածկեկ սէտիւր մը,
երկու աթոռակ, սուրճի եւ սեղանի սպաս-
ներ՝ անկիւն մը տեղաւորուած, պզտիկ սե-
ղանի մը վրայ . եւ անկողիններու գէղ մը,
սաւանի մը մէջ առնուած :

Մայր ու աղջիկ նստած էին արտում
տխուր . Լուսացարարուն աչքերուն «բէրտէ
իջած էր» — իրենց բառերովը — եւ բարե-
սիրտ ահնաբոյժ մը կը դարմանէր զայն .
Թողին Աղքատախնամն ալ օրտկան հաց մը
եւ չաբաթական քաշ մը միս յատկացուցած
էր : Ապրուստի ուրիշ միջոց չունէին : Աղաւ-
նին, թէեւ անուս աղջիկ մը, յայտնապէս
կ'ամէնար՝ երբ այս նիւթերուն վրայ կը խօ-
սէի մօրը հետ որ ատեն ատեն կը կրկնէր —
«Իմ մեղքս է կը քաշեմ» : Աղջկանը մեղքը
ինքզինքին վերագրել կուզէր : Իրաւ մեղա-
ւոր էր սակայն Աղաւնին՝ իր սխալանքին հա-

մար որ զինքը դատապարտելի պիտի դարձնէր
հանրային կարծիքին առջեւ, եթէ երեք
հանրային կարծիքը զբաղէր իրմով ու իրեն
նմաններովը : Լսած էի արդէն թէ զինքը մե-
լորեցնողը՝ սէրը եղած էր, կոյր սէր մը,
անձնագոհութեան տանող սէր մը զոր զգա-
ցած էր իրենց «տանը բարեկամին» վրայ
տակաւ տակաւ . առաջին անգամն էր որ
մարդ մը իր երեսը կը նայէր ու անոյժ խա-
քեր կ'ուզէր իրեն, իր լեզուովը, ժողով-
դային լեզուով, ու հանգիստ կեանք մը ու
պահովել կը խոստանար իրեն : Ի՞նչ չափ կը
նար ունենալ զինքը խտրելէ : Ու անոր լքու-
մէն, հեռացումէն ետքն ալ, դեռ կը հաւատ-
որ պիտի վերադառնայ, դեռ կը սիրէր զայն
առաջուքնէ աւելի՝ բուռն կերպով, սրտի
խորը ճնշուած սիրով մը որուն անկարող էր
յազթելու : Ու ամիսները անցնելով, ասոր
բոլորելով, իր յուսահատ սպասումը հիմիկ
թախսութեան մը, հիւանդագին համալիր-
պութեան մը փոխարկուած էր . օր օրի
նիհարնար, ուժերը կը սպառէին, ձեռք
առաջ չէր երթար աշխատելու . եւ ժամեր
զամուած կը մնար պատուհանին քով, ա-
քերը տարտամօրէն յառած գէպի ձորակի
ճամբան ուսկից այնքան ուրախութեամբ
նշմարէր ատեն մը իր սիրականին երեսուն
մայրը

Ձինքը մօտէն դիտեցի այդ օրը . աչքի
տեսած աղջիկս չէր . զաղկուած մը կար-
ամբողջ գէմքին վրայ որ ծիրախիտ սկզբնա-
ւորութիւն մը կը մօտենէր . աչքերուն տա-
կերը կապուած էին ու այտերը կը կարծր-
նային ատեն ատեն . աչքերը, սեւ գնդիկ
աչքերը, խոռոջանալու վրայ էին . ու ար-
աւելուներուն հակառակ, աղւորոցի կը
կարծեմ, հիւանդաբոյր աղւորութեամբ
որ աւելի կարեկցութիւն կը շարժէ քան ըն-
ձանք : Ես մայրը սփոխելու գացած էի ու
աղջիկը աւելի արժանի կը դանէի սխալման
ու արդահատանքի . Ի՞նչ կարելի էր ըսել
ընել սակայն, այդ տարաբաղդ էակին վրայ
կը ամոքելու համար : Պահ մը, երբ զոր
եղաւ ինքը, յոյն տանախրուէին կանուկ
որ հեռաքրքրուեր էր գիտնալու թէ ո՞ր էր
այս անձանքով այցելուն, խօսք բայի մօրը
— Ի՞նչ ընեմ, տղաս, պատասխանեց խնդ-
րով

կինը, անցածները հանրմ մըն ալ եկաւ, աս-
լափ տարի լաթը լուսացեր եմ. հալերնիս ի-
մացեր, մեղքըցեր է. էրիկը Վէքիլ Հայր
Սուրբին խառ բարեկամն է եղեր. Աղաւնիս
դէմ կը կենայ. իլլէ կըսէ քի գոռովէն պատկ-
ուելով ի՞նչ պիտի հասկնամ. որ մը չէնէ որ
մը պիտի դայ անիկայ. ո՞ւր պիտի դայ քի.
Աստուծմէ գանայ. ես առէս աս հալը ինկայ,
աղջիկս ալ ձառքէ կելլայ կոր. . . » :

Աղաւնին ներս մտաւ, ու խօսակցութիւն-
կիս ընդհատեցինք. հասկցայ թէ աւելորդ
բան էր համոզել զիրենք որ Պատրիարքարան
զիմեն՝ դարման մը խնդրելու. մութին մէջ
գործած իր մէկ յանցանքին համար լոյս-աշ-
խարհ կելլէ չէր ուզեր այդ ռամիկ ու անար-
գուած աղջիկը. Փոխանորդարան ներկայանա-
նալու, զինքը խաբող մայրուհի դէմ բողոքե-
լու զաղափարը սոսկում կ'ազդէր իրեն. լաւա-
զոյն կը սեպէր չորս պատի մէջ մեռնիլ :

Եւ իրաւ ալ մոռաւ :

Այդ այցելութեանո յաջորդող հինգ ամիս-
ներու միջոցին լսեցի որ Աղաւնին անկողին
ինկի է. բարեկամ բժիշկէ մը խնդրեցի եր-
թալ անգամ մը զննել վիճակը. չի մերժեց.
բայց պէտք չի առաւ այցելութիւնը կրկնե-
լու. թոքախաղը սուրարչաւ յառաջացեր էր,
յանկարծական կերպով. — «Լաւ սնունդ եւ
օդափութութիւն թերեւս օգնեն զինքը մինչեւ
ամառ ապրեցնելու, ըսաւ. գիտեմ որ ամառ
անկարելի բաներ են այդ աղքատ ընտանիքին
համար, բայց պատուիրեցի որ գոնէ առատ
կաթ խմցունեն» : Այս միջոցին, Աղքատա-
խնամը՝ ընդհանուր խնայողութեան մը պէտք
տեսնելով՝ շարժական մէկ քաշ միսը կէս
քաշի իջեցուցեր էր :

Աղաւնին, իր անկողինն մէջ, զաւակը
քովը ունեւալ կուղէր. խաբեր էին թէ հա-
րուստ արկին մը կաթնալաւաճառէն առնելով
ինքը որդեգրեր ու զիւղ տարեր էր. Հիւանդը
ձայն չէր հանած. չէ՞ մի որ զրկանքի ու
տառապանքի դատապարտուած էր ինքը,
լու համակերպումով մը :

Բժիշկին պատուէրը գործադրել կուղէր
մայրը եւ առտու մը, մանչ զաւակին հետ մէկ-
տեղ փողոցին գուռը սպասելով կաթնալա-

ձառին, պաղատեցաւ որ օրը յիսուն արիւմ
կաթ ձգէ իրենց. «Աչքերս աղէկնալուն —
վասն զի միշտ յոյս ունէր որ պիտի բժշկուի
ու լուսարարութիւնը շարունակէ — ճար
ճարակ կընեմ, պարտքս կուտամ» ըսելով.
«Բարան ի՞նչ է, մարիկ» պատասխաներ էր
բարի մարդը. Ու այդ օրէն, ամէն առտու,
կանոնաւորապէս կէս քաշ կաթ կուտար.
Ճակատագրային զիպուածով մը, Աղաւնին
զաւակն էր որ, հիմա, անգիտակցաբար, կը
կերակրէր իր մայրը. չէ՞ մի որ կաթնալա-
ձառին որդեգրին էր անիկայ, եւ ինքը եղած
էր միութեան կապը այդ մարդուն եւ իր
մօրը ու մեծ-մօրը միջեւ :

Ո՞ր մէկը յիշել ընտանեկան այս սրտա-
ճշիկ տառմին ամէն մէկ դրուագներուն.
այնքան թարմ են անոնք որ իրարու ետեւէ
կը խուժեն զրչիս տակ, մինչդեռ ատեն անց-
նելէ ետքը՝ պիտի կրնային առանձին պատ-
կերներ կազմել, անջատ վիպակներ. Վերջին
պարտքան, զոր լսեցի այս թշուառ ընտանի-
քին մաքառումին վրայ՝ մահուան դէմ, հի-
ւանդը Ալթը-Մէրմէրի հրաշագործ պատկերին
տանելու խորհուրդ մըն էր զոր չէին կրցած
իրագործել. ու ասիկայ խորունկ ցաւ մը
եղեր էր մօրը սրտին. յոյն կին մը չա՛տ հա-
մոզեր էր զիրենք, ապահովցնելով թէ կառ-
քով պիտի երթայ ու ոտքով վերադառնայ.
Բայց Աղաւնին կամխացած մարմինը կառք
դրուելու վիճակի մէջ չէր, եթէ երբեք կառքի
մը ստակ ձարէին. ուզեր էին պատգարակով
տանիլ. բայց նորէն քանի մը մէճիաի պէտք
կար :

Անցած շաբթու իմացայ որ Աղաւնին հո-
գեվարք է. տասերկու ժամէ ի վեր կը չար-
չարուի եղեր հանդիւններով. զաւակին շապիկը
բերեր վրան զրեր են որ կարօտը առնէ.
օգուտ չէ ըրեր, սոսկալի զիչեր մը անցուցեր
է. զառանցանքին մէջ սիրականին անուշը
կուտայ եղեր. առտուն կանուխ մարդ վաղ-
ցուցեր են անոր, որ կարեկցելով՝ մէջքի գո-
ւին հաներ առեր է, հիւանդին վրայ զըր-
ուելու համար :

Մայրը, իր աւելորդապաշտութեանը մէջ
յուզիչ, ոտքին մառններուն վրայ կոխելով,

ու գրացնուհի մը ձեռքէն բռնած, երկու զածօրէն կատարեր է այս վերջին պարտականութիւնը, իր ատած մարդուն դօտին տեղաւորելով իր պաշտած աղջկանը վերմակին վրայ, պէպէքին գլխին ու շապիկին քովիկը. ու համարյոք մը առնելով Ազաւնիի ոսկրուտ այտերէն, որոնք մահուան քրայնքով ողորդուած էին արդէն, դուրս ելեր, դուռը փակեր ու սեւին վրայ նստեր է — ինչպէս սովորութիւն է ժողովրդային ընտանիքներու մէջ — սպասելով որ «հոգին քաղուի» :

Հոգեվարքին լուրը առնելու օրուան յաջորդ իրիկունը, տուն վերադարձիս, պղտիկ աղայ մը նշմարեցի որ մութին մէջ կեցած կուլար. գիտ նշմարելուն, մօտեցաւ զողզով քայլերով. բան մը ըսել կուզէր ու չէր համարձակեր. Ազաւնիին պղտիկ եղբայրն էր :
— Ի՞նչ ունիս, տղաս, քոյրդ շա՞տ ծանր է, բա՞ն մը կուզէք :

«Բուրիկս մեռաւ» պատասխանեց հեկեկալով. ու աւելցուց, ամէկուտ չեղածով մը, բառերը դժուարաւ կլլելով բերնէն, իբր թէ ծանր պահանջում մը ընելու հարկին մէջ գտնուէր. «Վըրացող կնիկը կանչեցինք. հինգ զուրուշ կուզէ կոր քի մէռելը վըրայ...» :

ՄԵՆԱՍԷՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԻՐԵՐԳՆԵՐ

Մեր գաւառացի աւխասակիցներէն Պ. Վահան Գուլումեան դրկած է մեզ՝ ժողովրդային սիրերգներու նմոյցներ, — զորս կը հրատարակենք ստորեւ, — հետեւեալ նամակով որուն վրայ կը հրաւիրենք բանասերներու ուսադրութիւնը.

ԿԱՐԻՆ, 11 մայիս 1902

Գաւառական գրականութեան մշակման պէտքը կը չեղաուի առէն առթիւ, քիչ մը ամէն գրագէտի կողմէ, եւ ուրախալի է որ Մասիս ալ հետզհետէ աւելի լայն բաժին մը կուտայ անոր : Այս պարագաները ի նկատ առնելով, այս անգամ՝ փոխանակ թարգմանութեան մը՝ կը զրկեմ ձեզ գաւառական գրականութեան այն խաղաղի, հարազատ ար-

տադրութիւններէն որոնք ո՛չ թէ անհաղթ մը, այլ ամբողջ ցեղի մը մտածման գրգռիկը կը կրեն, կազմուած ըլլալով դարերու ընթացքին մէջ, հետզհետէ : Այս «Անտոնի» կոչուած ստանաւորները, որոնք մեծ մասով անարիւթ մնացած են ցարդ, եթէ չեմ սխալուի թէ եւ իրաւ է որ չունին ջգուտ ու կոտորուեալ մը, սակայն իրենց պարզութեան մէջ զօրիկ չեն բանաստեղծական շնորհ հրաշքոյրէ, եւ գողարի՜ տղաւորիկ գեղեկութիւնէ մը որ անոնց գլխաւոր յատկանք կը կազմէ :

Փափաղելի էր որ անոնց հրատարակութեանը, գաւառային գրականութեան համար գրիչներ՝ Մասիսի միջոցաւ իրենց զատուութիւնները հրապարակէին, ի վեր հանելով այն սիրերգներուն գրական, ներքին արժէքը :

Նամակագիրը՝ իր այս հրաւերով աւելի կրնձայի Մասիսի խմբագրութեան եւ աւխասակիցներուն, զբաղիլ նաեւ անգիր պարտքեամբ, եւ աւելորդ է ըսել քե այս նիւթի վրայ ձեռնհաս գրիչներու կողմէ մեզի դրկուելիք գրումները, ինչպէս նաեւ ժողովրդային բանաստեղծութեան ուրիշ նմանքն ալ — անցիկ ըլլալու պայմանով — համարեալ պիտի հրատարակեն :

Ա Ն Տ Ո Ր Ն Վ

1.

— Կարմիր ու ճերմակ հարմուկ,
Ջրեղերը ի՞նչ կու բանիս :
— Խարիստ է խարիստ երկիր,
Ես անոր ճամբան կու նայիմ :
— Հարմուկ, ինձի պաղ մը տար,
Խարիստէ՛ք խաղար կու բերիմ :
— Պաղ մը չէ՛ հաղար կու տամ
Խարիստէս խաղար բերողին... :

2.

Սէրըդ պողոտեցիդ առիւր,
Իմ սրտիս մէջը վառեցիր :
Կրակըդ վառ թողուցիր,
Դուն ալոյ երկիր գնացիր :
Դանի գուն ալոյ, ալոյ՝
Իմ սրտիս է գանդատ ու խոյ...

3.

Կարմիր կապտաւոր աղւոր ,
Ո՛ր կ'երթաս ճամբան մենաւոր ,
Մ'երթար ճամբան մենաւոր ,
Ճամբան մենաւոր մ'երթար
Որ չեղէ երեսդ ձիաւոր . . . :

4.

Կարմիր ու ճերմակ երես ,
Մաղդ երեսդ ի վար կու բերես ,
Քանի պագնելու եղայ
Չոր արմուկըդ դէմ կու բերես :
Չորնայ աս չոր արմուկըդ ,
Ամէն պագի դէմ չի բերես . . . :

5.

Աղւոր մը գիշուն ծոցը
Ա՛խ , կ'ընէ , քունը չի տանիր :
Գէշն ալ իր մաքէն կ'ըսէ .
« Իմ սիրուս քունը չի տանիր : »
Գէշը գիշերոյլ երթայ ,
Աղւորէն մաղիկ չի խռւի . . . :

6.

Կարմիր կապտաւոր աղւոր ,
Դուս կ'երես՝ դօտիդ մի՛ կապեր ,
Կապես նէ թուլ-մուլ կապէ ,
Հալիկը տանի ու բերէ . . . :

7.

— Հայ իմ հարստի դատրիկ ,
Ծոցդ է լի զարդ համբուրելի .
Քու ծաւդ ու ճիւղդ է ոսկի ,
Քու տերեւդ վարդ կու մանի .
Քու ջուրդ է անպակ դինի ,
Քու տեսքդ ո՛ր կու լինի :
Ճէպդ ու ծոցդ կ'ուզեմ ,
Կամ նուա տի տաս կամ խնձոր :
— Եկա՛ր քեզի նուա մի տամ ,
Կորէ տես , քանի՞ հատ ունի .
Ամէն հատէն պագ մը տուր ,
Էւելը հարամ թէ պիտի . . . :
— Չգիտեմ թէ խել էս դուն ,

Կամ թէ իս խելո՞ց կու հանես .
Նուա կայ՝ հազար հատ ունի ,
Հազար պագն ո՛ր կու լինի :
— Երկու տէրն որ մէկ լինի ,
Հազար պագը թէ՛լ կու լինի :
Սէր կայ՝ մարդը քուն կ'անէ ,
Սէր կայ՝ մարդն արթուն կու պահէ :
Սէր կայ՝ մարդը ժամ կու տանի ,
Անաղօթք ի տուն կու բերէ . . . :

8.

Աղւոր մը սիրեցի ես ,
Ուր կարմիր գոյն կայ ի վրան .
Երեսն է վարդի նման
Վրան ի վար կու վազէ :
Մարդն՝ որ սիրու տէր լինի ,
Ան՝ սիրուն գերի չի լինի .
Ինքն գերեզման բանայ
Ու մանէ հոջն կենդանի .
Սրտիկն ալ ի բաց թողու
Ուր ելնէ բոցն ծիրանի ,
Անցնող ու դարձող ըսէ .
« Սիրու տէր մարդ է , կու վառի . . . »

9.

— Չուրիկ , ո՛ր ակնէն կուգաս ,
Իմ պաղուկ ջրիկ , անուշիկ :
— Ես ալ ան ակնէն կուգամ ,
Հին ու նոր ձուներ կայ վրան :
— Եկա՛ւ քեզ պաղճաս տանիմ ,
Վարդ ու նուա ունիմ ջրեղու ,
Ռահանս է կող կապելու .
Քաղեմ ու փունջ փունջ ընեմ ,
Արմուղան դրկեմ խարիպիս :
— Խարիպիդ դուռը չգիտեմ :
— Եկուր նշանով ցոյց տամ .
Երթաս շատ երդիք անցնիս ,
Շատ խարիպ պառկեր մէն ի քուն .
Մէն ի քուն , աղւոր , մէն ի քուն ,
Իմ ու քու խարիպն էր արթուն . . . :

Կարին, Սանասար. Վարժ.

Հաւաքեց

Վ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆՈՐԱՁԵԻ ՊԱՏԻՓՆԵՐԸ

Զլսածնիդ չիկայ, կը կարծեմ թէ, մեր վարժարաններուն մէջ սլառահաս աշակերտներէն, քահանայքովը անտես աղբարէն մինչեւ երանելի անօրէններուն, որոնց համար օրուան հետ նոր սխրագործութիւն մը ստեղծել, — որոնց դրուագը սակայն միշտ անխուսափելի առտառցութիւնը բլլայ, — սովորական բաներ դարձած են, այնքան ասեմ որ, «բարով» գործ մը կատարելը, — սրամիտ Արհեստիներուն արտայայտիչ բառը դործանելով, — իրենց խելքին բանը չերեւար:

Օրինակները անթիւ են, եւ մարդ գտնաբերութիւն չբաշխեր անոնցմէ յաջող ընտրութիւն մը ընելու համար:

Ուրեմն անոնց է՛ն թարմը եւ հրաշալիօրէն զաւեշտականը, եթէ կ'ուզէք, դադար մը տալու համար թէ, երբեմն մինչեւ ուրե՛ր կը հասնին վարժապետի մը, — ձանձրանալ սկսած չէ՞ք ալ, այս փորձանք բառէն, որ ամէն կողմ դէմքերիդ կ'ելլէ, — անտես աղբարի մը, վարժուհիի մը, եւ վերջապէս որո՛ւ որ կ'ուզէք, մեր դպրատուններուն մէջ — կը դիտէ՞ք որ «վարժարան» չեմ ըսեր — պաշտօնավարող մարդիկներէն, եզական գործերը:

Մինակ թէ, — հաճելի՛ բարեբաղդութիւն, — զաւեշտին դերակատարը այս անգամ մենէ չէ:

Ատիկա սակայն, — մի՛ խարուիք, — պատճառ մը չէ՛ որ, անոր բերած ամօթը մեզի չպատկանի:

Թաղի մը բնակիչները, իրենց աղջիկներու վարժարանին մէջ, երկար ատենէ ի վեր կը պահեն եղեր խառնուրդի դեղձանիկ մը, որ ֆրանսերէն կը ճուռօղէ եղեր:

Զարմանա՞լ սկսաք, — Պէտք չիկայ ատոր:

Այդ թաղեկներուն փափաքն է եղեր, իրենց աղջիկի զաւակներուն ճուռօղութիւն այդ տեսակը սորվեցնել, կ'երեւայ թէ անոնց լեզուն շատ յարմար ըլլալուն համար, ատոր:

Դեղձանիկը սակայն, — Օր, չեմ դիտեր ինչ մը, Յրամտայի ծաղիկ, — իր անուշ գեղգեղներէն զատ, ուրիշ բաներ մըն ալ կըսկսի

սորվեցնել, մեր մանկամարդ աղջիկ-պարոններուն, երբ բաւական ոտքը տեղ կ'ենէ դպրոցին մէջ, եւ փայփայելի կը դառնայ որ կողմէն, իր մանկավարժական հաղուստի ձիրքերուն համար:

Սորվեցուցած իր հրաշալիքներէն մէկը, — որուն համարը լրագրութեան մէջ ալ տրւած անգամ դառաւ, — եղականօրէն զուարճալիքներէն մէկն է՝ աշխարհի վրայ լսուած դաւաճաններուն:

Երբ ֆրանսուհի վարժուհին յանցանքի մէջ կը գտնէ իր սանուհիներէն մէկը, անոնց կը սահմանէ բաւական անուր ու անփայտաթիփներ, — յանցաւորին ճեմակեղծութիւն մէկը՝ հանելով անոր գլուխը անցուցած ժամերով կեցնել, օրինակի համար, եւ ասոր նման բաներ, — որոնց ինք անունը դրած է եղեր, իր դեղձանիկի փափկահոնուն լեզուով Puntion de culotte, Bonnet d'âne, եւայլն:

Ասանց ֆրանսերէնին, չպիտի հաւատալէք ապահովարար, չարաչար իրականութեան այս պիւտերուն, անանկ չէ՞. — Կասկածի տեղ չմնալուն ուրախ եմ ուրեմն:

Կը շարունակուի այս կատակերգութիւնը ասանկ, եւ ծնողքներէն մէկը ձայն չի հանար մտածումով թերեւս որ ֆրանսերէն ճառար, ղերու համար պէտք են այդ բաները, մինչեւ որ պատիժի այդ դարասկզբիկ ձեւը կը հանդիսանայ աշխարհակութեան մը, — մինչեւ աղջկան մը ամէնէն պահուելիք ներքնազգեստը իր գլուխը անցուցնելու աստիճան, — եւ աշակերտը թաղեցի մը բողբոջու կ'ելլէ, թերթի մը մէջ:

Պայմանադրական խորհրդածութիւններու պէտք չեմ տեսներ, հարցական բացառականութիւններ ընելու համար, այս կամ այն կողմ, — յանցաւոր բանելով մէկը կամ միւրը:

Անօգուտ բաներ դարձած են ատենք, երկար ատենէ ի վեր, մեր մէջ, որովհետեւ ծանր լսողները շատցած են:

Մինակ, ամէն պարագայի մէջ, հետաքրքրական էր դիտնալ թէ, Puntion de culotte մը կամ bonnet d'âne մը չէ՞ք վաղցնեցորդա՞ք իրաւունքով, այդ խելացի վարժուհիներէն կամ իր նորօրինակ պատիժները թոյլատրողներէն ո՞վ որ է ան:

ՍՊԵՆՏ

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Տ Ռ Ա Մ Ն Ե Ր

Վ Ճ Ա Ր Օ Ր Ը

Վ. Է. Կ. ԲՕԼ. ՊՈՒՐԺԷՒ

Թիւ 2

Այս կերպով, ուսանողը համեմատ բնականորեն մէկ երրորդ մասը պրաւած կ'ըլլար, եւ անուշտ ամէնէն ընդարձակ, ամէնէն օգտուն մասը, այն՝ որուն պատուհանները պարտէզներու վրայ կը նայէին: Գրեթէ պերճօրէն կահաւորուած միակ մասն էր ան նաեւ: Իրաւէ որ ընկերս այս քչքչանքը կընդունէր քիչ մը այն հասարակութեամբ, որ շատ բնական է մեծ աշխատողներու քով, լեցուած այն դաշտաբայով թէ իր ապագան ծնողացը այժմու զոհողութիւններուն լիութի փոխարինութիւն մը կը պատրաստէր: Քանի քանի անգամ լսած եմ իր սա պատասխանը, երբ կուգէի թաւրոն կամ զբօսալայր տանիլ զինքը:

— Ձեւ կրնար, Ծերուկներս մտածելու եմ . . .

Ալէկ գիտէի թէ «իր ծերուկները» — ինչպէս կ'անուանէր զանոնք զօրովայից ընտանութեամբ մը — երբեք պարսուի բառ մը չլիար զանէին իրեն ուղղելու, իր յետմիջօրէն կամ զիշկը ինչ եղանակով ալ զօրծածէր: Ոչ, Ասանկով հասկցնել կուգէր իր եռանդաւրին փոյթը արժանանալու այդ սքանչելի անձնութեան: Անոր համար մանաւանդ այդ մասին հոգ կը տանէր, որովհետեւ անոնց մէջ զուշակել կը կարծէր տառապելու տարօրինակ զեւրութիւն մը: Եւ շատ ճշմարիտ էր որ այդքան ազնիւ մարդերէ կազմուած այդ ընտանիքը չունէր բնաւ այն զուարթութիւնը, որուն արժանի կ'ընէր զիրենք տարիներով ցոյց տրուած անձնութիւն մը: Հօրը կարմիր ձախտին վրայ, ուր կարկառուն երակները քունքերուն վրայ ցոյց կուտային արեւան հոգի մը, կարծես յարապետ մտազբաւում մը կը ծանրանար: Արդեօք կը վախնար որ գործը աւարտելէ առաջ կը մեռնի,

առանց տեսած ըլլալու իր օրդին ակռեժէ, միաքիւլթէն ուսուցիչ, Ակադեմիոյ անդամ, Բոլոր իր խնայողութիւնները այդ երկար եւ մեծածախս դատարարակութեան ֆախսուած էին, եւ նախկին պաշտօնէի մը հանգստեան համեմատ թոշակը՝ որ միշտ իր հետ անհետանալու վտանգը ունէր, հիմակուան հասոյթին էն կարեւոր մասը կը ձեւացնէր: Յօժարամտօրէն թախծոտ բնութեամբ մասրդ մըն էր պարզապէս, զոր կնոջը անստոյգ առողջութիւնը կը տխրեցնէր: Ասանք էին այն հարցումները, զորս ազան ինքզինքին կ'ուղղէր անշուշտ, ինչպէս որ ես ինձ կ'ուղղէի ամէն անգամ որ իմ այցելութեանցս մէկուն միջոցին Քոռպիէսի զէմքին վրայ տեսնէի այդ խորին մթազնութիւն մէկ հեաքը: Գալով տիկին Քոռպիէսի, պատասխանը պարզ էր: Գոնէ ինձի պարզ կ'երեւար: Էօթէն իսկ խիստ շատ անգամ ինձի խօսած էր իր երկիւղներուն վրայ՝ մօրը անտարանական ապագային նկատմամբ: Անոր վրայ լեարդի հիւանդութեան մը վտանգը կը կարծէր զանել: Կարճ ու գէր կ'ին մըն էր, որ քսան տարեկանին գեղեցիկ ըլլալու էր, լեռնուտ հարաւին այն դեղեցկութեամբ, թեթեւաշարժ ու քաջակազմ միանգամայն, ուր այնքան կենդանութիւն կայ կարծես ամփոփուած, կարծես սեղմուած փոքր պատեանի մը տակ: Լա Ռոքայրիւսանէն էր, Վառի մէկ գիւղը, թառած Մոռերու եմակներուն վրայ, Պրինսօյի եւ Թուլօնի մէջտեղ: Անիկա իր Բոսփանէն ժառանգած էր զոգտր ոտքեր եւ փոքրիկ ձեռքեր, — մատակ ջորիի ոտքեր, նուրբ եւ ուղղաձիգ, որ կարող էին յիսունը շատ ու շատ անցած իսկ, անստոյթաքօրէն մաղցիլ ընաշխարհիկ դարու վարներու առկիւններէն, — ձիթադուր զա-

զողներու զիւրաթեք ու նիւար ձեռքեր : Եւ իր բիւրուուն մէջ ի՞նչ սեւ բոց մը : Անոնք իսկապէս կ'այրէին խոռոչաւոր ու զեղնցած երեսի մը մէջ, որ կարծես մաղձով չաղու ուսած էր Թէեւ այս կինը զիս միշտ կընդունէր ծայրայեղօրէն չնորձալի շարժութիւններով, ինչո՞ւ համար ինքզինքս երբեք ազանով չէի զգար անոր հանդէպ : Իր բովանդակ էութեանը մէջ չեւ գիտեր ի՞նչ բան մը կար վայրագ ու կարծես կասկածոտ, զոր իր գաւ կին ներկայութիւնն իսկ չէր անգարեր, չէր մեղմացներ բոլորովին :

— Վրդովուած հոգի մըն է, կ'ըսէր ինծի Էօփէն, երբ լուր հարցնէի մօրը մասին : Եթէ հաւատացեալ ըլլայի, այս բանը զիս ստաւակուսել պիտի տար Աստուծոյ արգարութեանը վրայ : Կը ճանչնաս մայրս : Կը տեսնես թէ ինչպէս կ'ապրի : Իմ ամէնէն հեռաւոր մանկութենէս ի վեր, կը յիշեմ որ անկառապարձ է մի միայն ուրիշներու, մեր երկուքին՝ հօրս ու ինծի համար : Ծուկային, խոճանոցին, մեր ճերմակեղէնին, հագուստի կարկառութիւններուն մէջտեղ՝ իր կեանքը վառուած պիտի ըլլայ էն յետին աղախինին էն խոնարհ գործերովը, ինք որ օրիորդ մը ծնած էր, ու դաստիարակութիւն ընդունած . . . : Եթէ կար մէկը որ արժանի ըլլար սրտի անգործութիւն ունենալու, ան ալ ինք էր, եւ սակայն չունի . . . : Բարեպաշտ, նոյն իսկ մուկանդ է, եւ իր կրօնքը ուրիշ բանի չի ծառայեր եթէ ոչ խղճիխայթերով ինքզինքը կրծելու . . . : Իր այնքան տկար ըլլալովը, կը վախճում որ հիւանդ կ'իյնայ ամէն Մեծ-Պահքի, եւ անհնարին է զինքը ետ կեցնել իր ծայրայեղ խստակրօնութենէն : Կ'ուզէի խօսիլ իր խոստովանածօրը, բայց չեմ գիտեր թէ որուն կ'երթայ : Կարգ մը բաներու մասին շատ դաղտնապահ է, մանաւանդ այս մասին, եւ երբ փորձես զինքը հարցափորձել, կը զգաս որ կը վշտացնու . . . : Մաքուր խղճի վրայ կը խօսին մեզի : Մինչդեռ առողջ ստամոքսի եւ առողջ լեարդի վրայ խօսելու էին : Մարսողական իւրաքանչիւր շրջանին, լեարդը արիւնով կը լեցուի : Երբ ո եւ է արկածով մը մայր երակէն քշուած այն արիւնը լերդաւ ին խորշերը գրգռող տարրերով լեցուի, բու-

վանդակ բարոյական էակը կը թունաւորուի Ֆիզիքապէս :

— Բայց, կը պատասխանէի իրեն, զի պատահիր նաեւ պարագաներ ուր վիշաք մեղցնէ, եւ ուր հետեւապէս՝ Ֆիզիքական էակը կը թունաւորուի բարոյապէս :

— Ճիշդ է, կը հետեւցնէր, եւ ասով վերջապէս կ'ապացուցուի թէ մենք ոչինչ եւ ոչինչ կը հասկնանք . . . : Սակայն զիտեմ թէ այն օրը երբ իմ աղնիւ մայրս զիս ախտահարեց, այս յաջողութիւնը շատ տակի պիտի օգնէ իրեն քան Մարիէնպատի եւ Քաւլապատի բոլոր ջուրերը . . . Ուստի կը թնդում քեզ, երթալ աշխատելու համար :

Բ.

Երկարեցի այս յիշատակներս, որոնց մասնաւորութիւնները կրնայի բազմապատկել ինծի համար անոնց մէջ կ'ամփոփուին ապաւորութիւնները շատ տարիներու, — տարիներ որոնք 1873ի դարունէն, ուր Էօփէն Քոռալէնի հետ նորոգեցի Քօլէժին մէջ սկսած ընկերակցութիւնս, կ'երթան մինչեւ 1882ի ձմեռը, ուր տեղի ունեցան այն զեպքերը որոնց կը հասնիմ եւ որ այս պատմութեան իսկական նիւթը կը կազմեն : — Եւ կապակից տարիներ ինծի համար, զորս զործածեցի, ինչպէս մեծագոյն մասը նորոգեցողքադէտներուն, ամէն տեսակ վիժած նախագրութեանց, անբանաւոր եւ մտածման ապագային համար յաւէտ կամ նուազ վտանգաւոր փորձերու : — արգելադրու եւ մեթատաւոր տարիներ բարեկամիս համար, որ ինչոյն իր ճամբան դտած էր : Յաջորդապէս տեսայ զինքը հիւանդանոցի եփսթեռն, յետոյ եմքեռն, ոսկի միտային արժանացած, յետոյ տօթոթ, ու վստահ քայլով կը մօտենար ինչոյն զիւր-ուսուցչութեան այն արիւնքին զոր ինչոյն նպատակակէտ ընտրած էր : Մեր ուղղութիւններուն տարբերութիւնը այնքան զգաւոր եղած էր որ այս բոլոր շրջանի միջոցով մեր ամէնօրեայ յարաբերութիւնները չէին զիւրացած : Հետեւապէս այս ինք տարիներու միջոցին ունեցած էինք այն ընդմիջուած մտերմութիւններէն մէկը որոնք թայլ լին

ապր նշմարելու կարգ մը թեթեւ փոփոխու-
թիւններ ընտանեկան կեանքին մէջ անոնց ,
որոնց մօտ կը յաճախենք այսպէս , հետեւ
հետեւ : Ամիօ փողոցը ամէն մէկ այցիս , Բոռ-
պիէաներու ներքին կեանքը միշտ նոյնը գտած
էի : Նախորդ պաշտօնեան քիչ մը աւելի կարմիր
մոյնքով , քիչ մը նուազ թեթեւաշարժ :
Մայրը քիչ մը աւելի կապարադոյն դէմքով ,
ու աւելի կծկուած : Բայց բան մը չէր փոխ-
ուած իրենց սովորութիւններուն մէջ : Նոր
հասնէի , միշտ հայր Բոռպիէոյը կուգար զան-
գալիս ձայնին , խիստ շատ անգամ թեւերը
սոթտած , ձեռքը խոզանակի մը , կամ լամ-
պարի ջնջան մը , եւ խոհանոցի կիտարաց զոռ-
նէն կը նշմարէի մայր Բոռպիէոյը իր հնացին
առջեւ , հարաւի համադրամ մը պատրաստելու
վայ , — բրնձաթան մը կամ ձուկի ապուր
մը , — իրիկուան ձայնն համար գիտութեան
համբերատար դործաւորին զօր կը դանէի իր
սեղանին առջեւ , իր գրքերուն ու թղթերուն
մէջտեղ , առջի օրուան կամ առաւուան «զըն-
նութիւնները» խմբագրելու զբաղած , թէեւ
անիկա սկսած ըլլար իր վարպետներէն կան-
չով արդիւնաւոր խորհրդակցութիւններու ,
ու աշխատակցէր քանի մը մասնագիտական
հանդէսներու որոնցմէ պատշաճապէս կը վար-
ձատրուէր , «ձեռուկները» հազիւ թոյլ կու
տային իրենց տան մէջ մուտքը ծառայող
կնոջ մը որ առաւուն կուգար աշխատիլ ժամը
նինգ սուի :

— Աւելի չեմ պնդեր , կըսէր ինծի Բոռ-
պիէո , բացատրելով այս կացութիւնը . ա-
ռաջին անգամ որ երկուքէն մէկը հիւընդնայ ,
ճշմարիտ սպասուհի մը բռնելու պիտի պար-
տաւորեմ զիրենք : Մինչեւ այն ատեն , կը
վախնամ որ իրենց կեանքին ընթացքը փոխե-
լով , նոյն իսկ քիչ մը անոնց առողջութիւնը
կաշկալեմ , Մանաւանդ մօրս հակառակիլ
ընաւ չիգար , Գիտեա իմ նախկին երկիւղներս
անոր մօտին : Կը տեսնեմ որ ինքզինքը կու-
տէ միշտ , եւ ամէն առթիւ , Հայրս անոր
հակահարուածը կը զգայ : Այնքան ազնիւ
պիտի տէր ըլլալով հանդերձ , միջոցը կը զբա-
նան երջանիկ չըլլալու :

փոխուած էր սակայն : Էօժէն վաւիաք յայտ-
նած էր թողուլ Ամիօ փողոցը , տեղ մը հառ-
տատուելու հարկը պատրուակելով : Որդ-
ւոյն ու ծնողացը միջեւ առաջին լուրջ բա-
խումը եղաւ առիկա : Իր որոշմանը հաւանելէ ,
նոր բնակարանի մը խուզարկութեան մէջ
իրեն օգնելէ , իր տեղաւորման հսկելէ ետքը ,
հայրն ու մայրը մէկէն ի մէկ յայտարարեցին
թէ իրենց համար շատ դժուար էր հեռանալ
այն բնակարանէն ուր կ'ապրէին երեսուն
տարիէ ի վեր , եւ իրենց որոշման մէջ ան-
պարտելի մնացին : Այն իրողութեանց լոյ-
սովը , զորս ետքէն իմացայ , կը հասկնամ թէ
ձեռ Բոռպիէաներուն այս կամքը կը բովան-
դակէր քառութեան գաղափար մը՝ կնոջմէն
թելադրուած : Չգիտնալով այն յանցանքը
որուն գաղտնի ամօթը կը լափէր ըստ երե-
ւոյթին անբասիր այս ընտանիքը , ի՞նչպէս
կարելի էր բացատրել այս յամառութիւնը ,
եթէ ոչ մենամուտութեամբ : Բժիշկն ալ այս-
պէս կ'հնարադրէր : Բայց արդէն իր մէջ տար-
տաւորէն կը ծնէր կասկածը թէ իր ծնողաց
բարոյական վիճակը գաղտնիք մը կը ծած-
կէր : Անոնց վրայ կը զգար մաադրութիւն մը
բնաւ չընկերանալու այն բարօրութեան զօր
իր կացութիւնը առաջ պիտի բերէր : Գրեթէ
առանց ճիգի եւ առանց ընդհատելու նախա-
պատրաստական աշտատութիւնները իր քըն-
նութեանց համար , նախորդ տարին աւելի
քան տասը հազար Ֆրանքի հասոյթ մը ունե-
ցած էր , — տհաղին դուռնար այդ ընտանիքին
ապրելու սովորութեանց հետ բաղդատմամբ :
Կը յիշեմ որ եկաւ զիս տեսնելու վերջին վի-
ճաքանութիւնէն յետոյ , յորում անիկա ի զօր
փորձած էր կակղեցնել զանոնք : Պատմելէ
ետքը անոնց հետ ունեցած խօսակցութիւնը ,
իր թախանձաղին պնդումը եւ անոնց հետզ-
հետէ աւելի յամառ մերժումը , եզրակացուց .

— Իրենց պարագային մէջ խորշում (phobie)
կայ , առիկա անվիճելի է : Բայց մօրս մասին
ատուր մէջ կրօնական գաղափար մըն ալ կը
տեսնեմ : Այդ խոնարհութեան մէջ ապրիլը
իր քուրձ հագնելու եղանակն է : Վրաս այն
տղաւորութիւնը կը թողու թէ կուզէ ինք-
զինքը պատժել : Ինքզինքը պատժեմ , Հէ՛ք
սուրբ կին : Անշուշտ զիս չափազանց սիրե-

Այդ 1882 տարուան սկիզբը կացութիւնը

լուն, ինձմով չափազանց հպարտ ըլլալուն համար . . . Ձիւ գարմացնողը ան է որ հայրս ալ մասնակից կընէ իր ըմբռնելու եղանակին: Հայրս բարեալաշատ է: Հիմակ է որ երբեմն պատարագի կերթայ, բայց պզտիկութեանս բնաւ չէր երթար: Ի՞նչ փառսեր ցոյց կուտայ՝ զինքը համոզելու համար: Եւ հայրս տարիքը կտանէ, հանգչելու, աւելի աղէկ անանելու, աւելի աղէկ տեղ մը բնակելու եւ նայուելու պէտք ունի . . . Եւ անհնարին է այդ հին գլուխներուն խօսք հասկցունել: Անհասկընալի՛ բան է ասիկա:

Արդարեւ անհասկնալի բան էր: Բայց ինչո՞ւ համար հանդուստեան կոչուած պաշտօնէին եւ իր կեով այս արտակարգութիւնը չափազանց չի զարմացներ զիս: Ուրիշի մը անձին մեր վրայ թողած անսրոշ ապաւորութիւններուն տմբողջութեան մէջ թագուն արամարանութիւն մը կայ որուն անբանածեւ յայնառատութիւնը կը զլէ կ'անցնի մեր խսկական դիտակցութիւնը: Անկարող պիտի ըլլայի ըսել թէ ի՞նչու էօթէնի ծնողաց այդ ընթացքը համաձայն կուգար այն պատկերին զոր ինքիւր մէջօ կը կազմէի անոնց մասին: Ստիպան ի՞նչ անճշմարտումն տարօրինակութիւն այդ անախիալ մեկուսացումը հօր մը եւ մօր մը, որոնք ապրած են միմիայն իրենց զուկին համար, այս զուկին յաջողութեանը հանդէպ: Ի՞նչ արտօղութիւն հրաժարիլ անոր յաղթանակին մասնակցելու ամենօրեայ ուրախութենէն, — յաղթանակ որ իրենց գործն էր: Ամբողջ առաք տարի տեսած էի զիրենք որ շնչած, ապրած էին միմիայն թոյլ տալու համար իրենց զուկին որ հետեւի իր ասպարէզին, քննութիւնները պատրաստէ, ըլլայ այն մեծ բժիշկը, որ եղած էր, եւ հիմակ կը մերժէին խառնուելու իրենց բովանդակ կեանքին մոլեկան ըզձանքին այս իրականացմանը: Կ'ենթադրէին որ շա՛տ խոնարհ ծագումէ են, շա՛տ հինաւուրց ձեւեր ունին: Կը նախատեսէին թէ իրենց զուակը իրենցմէ շա՛տ բարձր միջավայրի մը մէջ պիտի ամուսնանայ, ու իրենք դերագոյն զոհողութեամբ մը հիմակուց մէկ կողմ կը քաշուէին: Այս, ենթադրութեանց մէկ քանինքը ընդունելի էին: Միւսները ոչ:

Միակ ենթադրութիւնը զոր բնաւ մտքս անցուցած, առ էր թէ այս մարդիկը կրնային գործած ըլլալ արարք մը որուն համար չէին երբեք ինքզինքնուն: Ի՞նչպէս երեւակայութիւն այս արարքին զգուշութիւնը իրենց ձեռքով զախճանին վրայ ծանրանար այնպիսի բան ծանրութեամբ մը (եւ այս մասին էօթէն յօտալէր) որ տիկին Քուպիէն իր կէս խառնած մտեւանդութեամբը՝ սոսկաւ ու սոսկաւ ցնէր իր ամուսինը, մտաբերելով մտապաւ մա՜րդ եւ անխուսափելի դժոխքը: Եւ իրօք այնքան պարզ արկածներէ ետքը որոնք զուկին առջեւ բացին թշուառութեան այդ անդունդը, երբոր խորհիմ, անկարելի է ինքի կը կրկնեմ, անոր մէջ չգտնել այն պատիւ որմէ կը սոսկաւ հաւատաւոր կ'ընէ:

Թերեւս ամիս մը կար որ էօթէն վերագրեալ խօսքերով աւագած էր իր ծնողք իրեն հետ չապրելու յամառութեան վրայ: Անկից ի վեր չէի տեսած զինքը, եւ չաւէի զարմացած, գիտնալով իր գործին պահանջները: Բնաւ միտքէս չէի անցունել թէ այդ չորս շաբթուան միջոցին իր մտածող գրաւուած ըլլար բոլորովին տարբեր բան մը անանդառութեան հիւանդութիւններով: — Սիրելիական նիւթը իր ուսումնասիրութեանց. — թէ՛ գրեթէ ակամայ՝ հետաքրքրութեան մը ձեռնարկած ըլլար որուն առաջացումը գուցէ ետ մղէր զինքը, եթէ կարեւոր գուշակել անոր վախճանը: Բայց ոչ, Սիւսնական իմացականութիւններէն մէկն էր — նոյն լակ իր ասպարէզին մէջ կան պանկներ, — որոնց համար ոչ մէկ զգացում արժէք ունի՝ ճշմարտութեան մէջ ապրելու խիզախ բաղձանքին հանդէպ, որքան որ դժուար ըլլայ այդ ճշմարտութիւնը, քան աչքիս առջեւ է ինք երբ, այդ չորս շաբթութեան ետքը, սենեակէս ներս մտաւ, ժամ տատնումէ կէն, քիչ մը առաջ, իրեն համար անողատն ժամ մըն էր իր աշխատութեան պատճառով, բան մը որ բացառիկ պարագայ մը գուշակել կուտար: Իր դէմքին արտայայտութիւնը ա՛լ աւելի ցոյց կուտար այս բանը: Սկսնակեւ անձկութիւն մը կը կծկէր իր մազերը եւ իր աչուքներուն մէջ, սովորա-

բար արեւոյն թափանցիկ , այնքան առլցուն ուսման գիշերիկ պայծառ աշխուժով , կը կարգայի պաշտական անդոնութիւն մը կարծես , անդոնութիւնը մարդու մը որ ուրիշի մը մօտ դիմում մը փորձելու վրայ է , որուն մասին ինչորի յարուցուիլն իսկ չուզեր տեսնել : Մնաց որ ասոր համար բնաւ դիւանագիտութիւն չըսենքուց եւ բոլորովին վիրաբուժական որոշողութեամբ մը բացուեցաւ ինծի :

— Շատ փափուկ ծառայութիւն մը պիտի խնդրեմ քեզ : Նախ կը յայտարարեմ որ եթէ յարմար չգտանա այդ ծառայութիւնը ինծի մատուցանելու , ամենաւաղ չպիտի սրամախմ : Մինակ կը խնդրեմ որ « ոչ » պատասխանելէ առաջ խորհրդածես . . .

— Կը խոտանամ կրցածս ընել « այո » պատասխանելու համար , ըսի , մինչնոյն լուրջ չկալով որով անիկա խօսած էր ինծի : Գիտնալով որ որքան հակառակ էր ցուցամոլութեան , այս տեսակ սկզբնաւորութիւն մը իր քով բանաւոր որոշողութեան մը նշանն էր , եւ ես այնքան կը յարգէի զինքը որ չէի կրնար անմիջապէս իր լրջութեան աստիճանին չբարձրանալ :

— Շնորհակալ եմ , յարեց ձեռքս սեղմելով Յետոյ առանց ո եւ է նախաբանի . « Քիչիկ պատմեցի թէ ի՞նչ տարօրինակ յամառութեամբ մը ծնողքս վերջնականապէս մերժեցին ինծի հետ բնակիլ : Ըսի նաեւ քեզի թէ այս մերժումը հետեւեալն էր ընդհանուր մտադրութեան մը , այն է բան մը չիղիսիկ իրենց կենցաղավարութեան մէջ , մինչդեռ կրնան եւ պարտին փոխել , իմ կեանքիս մասնակցելով իբր թէ վախճային մասնակցելու չարաչառութեամբ ձեռք բերուած հարստութեան մը , եւ սակայն ինչ որ տեսիմ , ինչ որ պիտի ունենամ աշխարհի վրայ՝ արդիւնքն է իմ ու իրենց աշխատութեանը : Իրենք են որ ըլին զիս ինչ որ եմ , իրենց զոհողութիւններով , Դուն վկայ ես : Եթէ ամբողջ ժամանակ արամադրելի ունեցայ , եթէ արհեստի ո եւ է սարկութիւն չկրեցի , անոնց շնորհիւն էր , անոնց ինծի նկատմամբ ցոյց տուած անձնուիրութեանը , որ ամէն ժամ , տարիներով , հաւաքեալէ մեծցած է : Ու ես այս

անձնուիրութիւնը կ'ընդունէի այն յուսով , այն վստահութեամբ թէ իրենց ձեռութեան վրայ պիտի գուրգուրայի : Ու կը զլանան ինծի այս ճշմամբ ուրախութիւնը որուն սպասումը ինքզինքիս առջեւ դիւ կ'արգարացնէր անոնցմէ այնքան բան ընդունած ըլլալուս . . .

— Այդ զգացումը մի ունենար , ընդհատեցի . ոչ քեզի կը վայլէ , ոչ անոնց : Սրտեր կան որոնց նկատմամբ ապերախտ ըլլալ է երախտապարտ ըլլալ ուղիւր : Տուածնին առնելու է , ինչպէս որ ձեզի կուտան , առանց հաշուելու . . . Սիրելով կը փոխարինես զանոնք . . .

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Կայսերական գեանասում . — Առեւտրական եւ Հանրագում չինութեանց նախարարութեան վիճակադրութեան գիւտնի Տնօրէնի պաշտօնին բարձրացաւ՝ նոյն նախարարութեան առեւտրական վարչութեան Տնօրէնի օգնական Ռօպէր Էֆ. Եաղըճեան : — Իւլայի Ա. աստիճան շնորհուեցաւ՝ Օսմ. Հանրային Պարտքի Վարչութեան Տրապիզոնի ճիւղին տեսուչ Գրիգոր Էֆ. Շապանեանի , եւ Դ. Կարգի Մէճիտիյէ պատուանշան՝ Անատոլի երկաթուղիներու Ընկերութեան առաջին քարտուղար Թաքադ Անաթոն Էֆ. ի :

Ամուսնալուծման վճիռ մը արձակեց Կրօն. Ժողովը իր վերջին նիստին մէջ : Աւասիկ այս մասին Կրօնական գիւտնի կողմէ լրագրաց հաղորդուած զեկոյցը . — « Դատաստանական Խորհուրդը՝ Բերայի Ֆէրիքիւղլլի Ե. Շ. ի առաջնական խնդրոյն մասին տեղեկագիր մը մատուցած էր , որմէ կերեւայ թէ ամուսնոյն ասկէ առաջ տարի առաջ իննամսեայ կենակցութեան միջոցին ցցուցած խուժուժ վարմունքին պատճառաւ ինքը ցարդ կոչս մնացած եւ ամուսինն ալ ընտանեկան յարկը թողլով խոյս տուած եւ 9 տարիէ ի վեր անյայտացած է : Ժողովը՝ Դատաստ. Խորհրդոյ եւ Կայս. Բժշկական Ժողովոյ տեղեկագրերուն եզրակացութեան համաձայն լուծեց պսակը , եւ արտօնեց կնոջ ամուսնութիւնը իբրեւ կոչս

աղջիկ . եւ կարեւոր դատեց անյայտացած
ամուսինը խաղառ արգիլել ամուսնութենէ :
Նպաստից Յանձնաժողովին վերակազմու-
թիւնը , որ քանի մը չարաթէ ի վեր կը զրա-
ղեցնէր օրաթերթերը եւ Պատրիարքարանը ,
կատարուեցաւ խառն ժողովի չորեքշաբթի
օրուան նիստին մէջ եւ այդ մարմինն անդամ
նշանակուեցան , Տեարք՝

Բարթող	Էֆ. Թէլեան
Գառնիկ	» Կիւլպէնկեան
Եղուարդ	» Գարակէօզեան
Երուանդ	» Յ. Եսսեան
Մարգէն	» Յակոբեան
Սիմոն	» Գայսէրեան
Տիրան	» Կիւմիւշկէրտան

Թէլեան Էֆ. , որ Նպաստից նախորդ
Ծանձնաժողովին մէջ այնքան օգտակար եղած
էր իր զանազան առաջարկութիւններովը ու
զրաւոր աշխատութիւններովը , թէեւ ուղեց
հրամարիլ , բայց Ս. Պատրիարք Հօր եւ խառն
ժողովի անդամներուն ստիպմանը վրայ՝ ըն-
դունեց անդամակցութիւնը նորակազմ Ծանձ-
նաժողովին որուն միւս անդամներն ալ սի-
րելի է յուսալ որ պիտի ընդունին Ազգ. Վար-
չութեան կողմէ՝ իրենց առաջարկուած այս
պաշտօնը , եւ այսքան լաւ տարրերէ բաղ-
կացած այս մարմինը , նիստ կազմելով ու իր
դիւանը կազմելով , ձեռնարկէ գաւառային
արհեստանոցներու հաստատման ծրագրին
գործադրութեանը :

Համբարձման տօնը . — Հինգշաբթի , 23
մայիս , այն վայրկեանին երբ Մասիսի Յու-
շառարը կ'աւարտենք՝ Ս. Փրկչի Ազգ. Հի-
ւանդանոցի հաստատման 70րդ տարեդարձը
կը տօնուի Եէաթ-Գուլէ , Պոլսոյ ամէն կող-
մերէն դացող ստուար բազմութեան մը ներ-
կայութեամբ : Ս. Պատրիարք Հայրը , որ
չորեքշաբթի իրիկուընէ Հիւանդանոց առաջ-
նորդուեցաւ , կը պատարագէ Փրկչի մատրան
մէջ եւ քարոզ կը խօսի : Յետոյ , հոգեհան-
գիստ՝ բարերարներու գերեզմանին վրայ ,
մխիթարական այցելութիւն Հիւանդանոցի
պատասպարեալներուն , եւ միջօրէին սեղան ,
որմէ ետքը հրաւիրեալները կ'այցելեն Որբա-
նոց : Օրաթերթերը մանրամասնաբար նկարա-
զրած կըլլան արգէն , երբ Մասիսի այս թիւը

հրապարակելէ , բարեգործութեան նուիր-
ուած այդ հանդէսին բոլոր մանրամասնու-
թիւնները , — հանգէս մը որ իր արտաբեր-
նութեան հատոյթէն աւելի բարոյական նշա-
նակութիւն մը ունի , եւ որու միջոցին՝ որ-
նուերով յիշատակը Պէդճեան Աւիրային եւ
ուրիշ հանգուցեալ բարերարներու , արժանա-
ւոր յարգանք մը կ'ընծայուի նաեւ ամէն անոց
որոնք կը սատարեն Ազգին Տանը եւ կ'ա-
խառն անոր համար : Կը մաղթենք որ արդ-
Հոգաբարձութիւնը զեռ երկար տարիներ վա-
րէ բարեգործական այդ մեծ հաստատութիւնը
որ նշանակելի բարեօքուսներ կրկց իր օրո-
թէ՝ մատակարարական եւ թէ՝ բժշկական
ճիւղերուն մէջ :

Պիլիքնիկի առաջնորդ Տ. Մովսէս եպիս-
կոսմորէի ձեռնարկ յանձնել որոշուեցաւ , իսկ
ժողովի վերջին նիստին մէջ , Կիլիկիոյ վա-
թողիկոսական ընտրութեան համար Պատրի-
արքարանի պատուիրակի պաշտօնը , Սամակ-
աղապիները խնդրած ըլլալով որ Տ. Յու-
կոս եպիսկ. Աշոտ չի հետացուի իր թեմէն ,
նոյն իսկ առժամապէս :

Վեներաբլի Ռափայելեան վարժարանի
արձակուրդի հանդէսը անդի ունեցեր է մայիս
21ին (Ն. Տ.) , որուն նախապահեր է Միք-
թաբեան միաբանութեան արքայայ Տ. Կիւս-
տիոս Վ. Կիրեղեան : Ներկայ գտնուել են
բազմաթիւ հրաւիրեալներ եւ Օսմ. հիւպա-
տոսը ու Վենետիկի կառավարիչը : Վարժա-
րանի հայերէն լեզուի եւ մատենագրութեան
ուսուցիչ Հ. Եփրեմ Վ. Աբրահամյան , խա-
րնդէն լեզուով համառօտ բանխօսութեան
մը վարժարանին պատմութիւնը ըրեր է :

Թաւերական Գերկայացում մըն ալ կար-
մակերպած է Սամակիոյ Աղքատախանայի
կը յուսանք թէ նոյն համակիր ընդունելու
թիւնը պիտի գտնէ որուն արժանապատ-
ճարուի Աղքատախանային նպատակի ցերեկային
Ընտրուած խաղերն են՝ Մուրացիկ կիներ ,
առամ , եւ զաւեշտ մը , զոր պիտի ներգրա-
ցեն Միտիկեան թատերախումբը վաղը ցոյցի
թէլիէ-Պաշլի թաղապետական թատրոնին մէջ
Յատկապէս կազմուած մասնախումբ մը ան-
հուրաբար կ'աշխատի սոյն ցերեկային շաբ-
փայլուն ու կանոնաւոր ընծայելու :

Արտօնատէր Կ. Ս. Իլիթիճեան

Տպագրութիւն Գ. ՄԱՏՈՒՆՈՍԿԵ
Կ. Պոլիս , Ֆինեանքլար եօզուշու , Թիւ 27

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՐ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կալաթա-Ալրայի Լիսէին դէմ

ԴԵ. ՆԵ. ՆԲ. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՀԵՐՃԱՅԻ

ԱԼԻԲԱՆՆ ԳԱՐՏԻՉԳԱՆԵԱՆ անունով
ձեռնով վաճառատան անունը այս անգամ
ՀԵՐՃԱՅԻ փոխուած ըլլալով, կը ծանուց-
ուի բոլոր արդայ յաճախորդաց որ եթէ կը
փափաքին հարիւրին ԻՆՆՍՈՒՆ ՇԱՀՈՎ ԵՒ

առանց վնասի գոհարեղէններ գնել ԿԱՆԽԻԿ
ու ԱՊԱՌԻԿ, եւ ծախել առանց վնասի,
պէտք է զիմն ըստ առաջնայն, Ոսկերչաց
Շուկան, թիւ 13 վաճառատունը:

ՏԱՆՅԷԶԻ ՇՈՎԱՆՈՑՆԵՐՈՒ պատրաս-
տութեան մասնագէտ Պ. ՊԵՅԼԷՐԵԱՆ (Բերա,
Թէքթէ, Պէյքըրի մաղաղային դէմ, թ. 561)
պատիւ ունի ծանուցանել թէ իր վաճառա-
տան մէջ կը ծախուին վերջին նորաձեւութեան
համաձայն ընտիր հովանոցներ, մասնաւորա-
պէս կանանց համար, որոնցմէ ամէնէն փափ-
կաճաշակներն իսկ գոհ պիտի մնան: Յանձ-
նարարութեամբ կը պատրաստէ թիւով Փան-
թէզի հովանոցներ, յարեւմտան եւրոպական
նկարուն: Պատրաստ կը ցանուին նաեւ հար-
սանեկան օժիտի յատուկ գեղեցիկ հովանոց-
ներ: Կը հրաւիրենք հայ ընտանիքները ան-
գամ մը այցելել այս վաճառատունը որ իր
տեսակին մէջ առաջին է: Չափաւոր զիններ:

1-8

ԻԻՆԻՍՆ

ՀՐԴԵՀԻ ՆԻ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899/ Վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամապլուի եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամապլուի	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889/ Վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Դրամապլուի եւ պահեստը	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Ինքոն»-ի ապահովագրելոյ կ'ընծայի հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ՁԷ ԴՏՆԵԼ ԱՐԵԻԵԼԻՔԻ ՄԷՉ ԴՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով: Նպատաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան
պայմաններ: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքոն
ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք: որ շահարածիներու բարոյսան (accumulation des
bénéfices) ՅՈՒՒ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեալք գործող ընկերութեանց կ'ապահովա-
գրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիա գլխաւոր քաղաքաց մէջ

ԱՐԻՍ ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Արուեստագիտական, վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենա, ներով օժտեալ եւ՝ եւրոպայի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ։ Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու տարաւնայք դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գինեկու գերազանց ամանութիւնը։ Փափաքողներուն՝ քաթալօղը ձրի կը զրկուի։

Մեծաքանակ գնում՝ բնեղ ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱԲԻ Կ. ԻնձիձիծԱՆ ՈՐԻԻՔ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմուշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով։

ԲԱՐԻՉ — ՊՊ. Լաքառիեռ՝ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքուտուն

ՊՈՄՊԱՆ. — ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆՆԻՐԻԱ. — Պ. Մ. Գալֆանան

ԳԱՀԻԲԷ. — Պ. Հ. Ռոզանբալ

ՌՈՒՍՃՈՒԻ. — Պ. Պ. Կ. Ինձիձիծան որդիք.

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտօրի.

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ԶՄԻՌՆԻԱ. — Պ. Հայրիի Վառնիկ.

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիկո Ֆերմանտեզ.

ԻՆՍԻԻԳ. — Պ. Մ. Քափուանո.

ՊԷՅՐՈՒԹ. — Պ. Ֆրանքէլ Շիֆֆեր.

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղորաք.

ՏՐԱՊԵՋՈՆ. — Պ. Արիս Կ. Զինձիձիծան.

ՍԵՐԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեմաուրեան

ՌՈՏՈՒԹՈ. — Պ. Յակոբ Բոսփատալ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՂՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ 34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար 121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած 164,172,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բաշափին վրայ, Մաքսանց հին տեղը

Ընդհ. Գնահիշ

Ա. ՀԻՐՄԻԻՉ

Ընդհ. Գործակալ

ԹԷՈՏՈՐ ՌԷՐԲԷՆ